

Ղ. ԻՆՃԻՃՅԱՆԻ «ԵՂԱՆԱԿ ԲՅՈՒԶԱՆԴՅԱՆ» ՏԱՐԵԳԻՐՔԸ

(Բանասիրական ճշգրտումներ)

«Եղանակ բյուզանդյան-բազմավեպ» տարեգրքի հատորների հետ թեթևակի ծանոթանալիս անգամ նկատելի է, որ վերջիններս խիստ ինքնատիպ բնույթ ունեն։ Յուրաքանչյուր տարեթիվ անպայման ունի տվյալ տարվա բոլոր տասներկու ամիսների աստղաբաշխական նկարագիրը։ Մրան հաջորդում են յուրաքանչյուր ամսվա հետ կապված մանրամասն բնութագրականներ՝ օրվա տևողությունը, արևածագի ու մայրամուտի ժամանակները, գիշերահավասարները, յուրաքանչյուր օրվա ընթացքում տեղի ունեցած բնական երևույթները (անձրև, ձյուն, տեղումնայից օր, լուսնի նորելը) և այլն, և այս ամենը տրված է հաճախ վայրկյանների ճշգրտությամբ։ Այս ուղղությունն էլ, առավել կամ պակաս չափով, գերակշռող է մնում բոլոր տարիների համար։ Նման աստղաբաշխական բնույթի տարեգիրք աննախընթաց է ինչպես Մխիթարյան միաբանության գրական անդաստանում, այնպես էլ դարասկզբի հայ մտավորականության կյանքում։ Օրինական հարց է ծագում. որտեղի՞ց էր վերցրել Ինճիճյանը իր տարեգրքի նախագաղափարը, ո՞վ էր դրդիչ հանդիսացել նրան այդ ուղղության տարեգրքի հրատարակության համար։

Իր «Դարապատում» աշխատության մեջ, նկարագրելով ժամանակաշրջանի անվանի անձանց և շարադրելով իտալացի աստղաբաշխ Ջուզեպպե Տոալդոյի կյանքը, Ինճիճյանը գրում է. «Աս բարեսիրտ աստղաբաշխը, որուն հետ շատ տեսնովիլ եղած է ընտանի բարեկամություն ունենալով, մեզի հորդոր եղավ, իրեն ըրածին պես, Ստանպոլին վրա **Եղանակ** հանել։ Առաջ հանելու արեգակնային ըրած փոփոխությանց օրերը, ետքը լուսընկային, որ կըլլա շատ տարի գրվելեն ետև իրեն շրջանները հանելու համար»<sup>1</sup>։ Ասես ամբողջացնելու համար այս կարևոր վկայությունը, Ինճիճյանը քիչ հետո շարունակում է. «Ասոր հորդոր օրինակը աս պտուղը բերավ, որ մենք ալ, Ստամպոլ գալեն ետև, արևուն ըրած փոփոխությունները ետևէ ետև նշանակելով, արեգակնային փոփոխությունը Ստանպոլին վրա երևան ելավ... ինչպես որ ընթերցասերքը կրնան «Եղանակներուն» մեջ գտնալ»<sup>2</sup>։

Իտալացի աստղաբաշխ Ջուզեպպե Տոալդոն (1719-1798) անհայտ անուն չէ աստղաբաշխության պատմության մեջ։ Տիեզերական մեխանիկայի օրենքների բացահայտմանը նվիրված իր մի քանի աշխատություններից բացի, նա նշանավոր հանդիսացավ երկնային մարմինների՝ մեր մոլորակի վրա ունեցած ազդեցությունների ուսումնասիրության բնագավառում։ Այս նպատակով 1773 թ. մինչև իր մահը նա «Աստղօդերևույթ օրացույց» խորագրով հրատարակում էր տվյալ տարվա ամիսների, ամսվա օրերի գիտական-աստղաբաշխական մանրակրկիտ նկարագիր ունեցող տարեգրքեր։ Տոալդոն դա անում էր Պադուա (Հս. Իտալիա) քաղաքի համար, ուր ապրում և աշխատում էր նա, և նույնն էլ սովորեցրել է Ինճիճյանին՝ Պոլսի համար, որն էլ վերջինս օգտագործել է մասնագիտական հմտությամբ։ Թե ինչպիսի «ընտանի բարեկամություն» կարող էր լինել այս երկուսի միջև, – առայժմ դժվար է ասել, բայց որ հայ վարդապետը իր «Եղանակ»-ները հրատարակել է ուղեցույց ու խորհրդատու ունենալով Տոալդոյին, – արդեն աներկբա է։ Դրա համար Ինճիճյանի՝ վերևում բերված վկայությունից բացի, բավական է համեմատել Տոալդոյի «Աստղօդերևույթ օրացույցի»

<sup>1</sup> Ղ. Ինճիճյան, Դարապատում, հ. 8, Վենետիկ, 1827, էջ 63:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 64:

ցանկացած համարը «Եղանակի» որևէ համարի հետ համոզվելու համար, որ Ինձիճյանը աստղաբաշխական-օդերևութաբանական ցանկերը կազմելու ձևն անգամ վերցրել է Տոալդոյից:

Իհարկե, Ինձիճյանը շատ լավ գիտեր, որ այդ հրատարակությունն ի վերջո նախատեսված է հայ ժողովրդի համար, իսկ XIX դարասկզբի գրական ցածր մակարդակ ունեցող հայ ընթերցողներին մատուցել սոսկ աստղաբաշխական տարեգիրք, կնշանակեր սկզբից իսկ «Եղանակը» դատապարտել կործանման: Այդ նկատի ունենալով էլ, նա բավականին խելացի կերպով աշխատում է իր տարեգիրքը հարմարեցնել ժողովրդի պահանջներին՝ «Եղանակում» զետեղում է զանազան պատմություններ, առակներ, ժողովրդական ասացվածքներ, ազգային թեմատիկա ունեցող բանաստեղծություններ, պատմա-աշխարհագրական տեղեկություններ և այլն:

Այսպիսով, կարելի է գալ հետևյալ եզրակացության: Իր «Եղանակ բյուզանդյան-բազմավեպի» նախագաղափար-օրինակը Ինձիճյանը վերցրել է իտալացի աստղաբաշխ Ջուզեպպե Տոալդոյից և նրա հրատարակած «Աստղօդերևույթ օրացույցից»: Չխախտելով հիմնական սկզբունքները, նա աշխատել է հնարավորության սահմաններում հարմարեցնել այն հայ ընթերցողի հոգևոր պահանջներին:

«Եղանակ բյուզանդյան-բազմավեպի» հրատարակության վերաբերյալ տվյալները հակասական են ու իրարամերժ: Առաջին հիշատակությանը հանդիպում ենք «Ցուցակ Մխիթարյան տպարանի» խորագիրը կրող գրքույկում (1863), ուր տարեգրքի հրատարակության տևողությունը նշված է 1815-ից մինչև 1820, և խմբագիրը՝ Ղուկաս Ինձիճյան: 1893 թ. հրատարակված գրացուցակը (էջ 17), առանց որևէ փաստարկման, նոր թվական է հիշատակում՝ 1800-1820: Այս թվականն էլ միաբանության գրացուցակներում պարբերաբար կրկնվել է մինչև վերջերս: 1878 թ. Վենետիկում հրատարակվում է Գարեգին Չարբհանայանի «Պատմություն հայերեն դպրության» աշխատության երկրորդ հատորը, ուր հեղինակը «Մեր դարը» գլխում տալիս է հայ պարբերականների համառոտ տեսությունը: Անդրադառնալով «Եղանակին» և նշելով նախորդ՝ «Տարեգրության» պարբերականի տեսրակների ջերմ ընդունելությունը, Չարբհանայանն ավելացնում է. «Ասոնց ազգին մեջ գտած ընդունելությունը կխրախուսե «Եղանակ բյուզանդյան» կոչված գրքույկներուն հրատարակությանը ձեռք զարնելու, որ և անընդհատ կշարունակվի գրեթե քսան տարվա միջոց (1803-1820), տարվե տարի ավելի հետաքննական և ընդարձակ ճոխությամբ տեղեկություններ հաղորդելով ազգայնոց» (էջ 470): Չարբհանայանը ոչ մի փաստ չի բերում իր նոր՝ 1803 թ. հիմնավորելու համար և հետագա շարադրանքի ընթացքում էլ նշելով զանազան թվեր, փաստեր, անվանումներ, լռելյայն ելնում է այն բանից, որ դրանք ինքնըստինքյան հասկանալի են ու ճշմարիտ: Ուրիշ բան է ասում Չարբհանայանը 1883 թ. հրատարակված իր «Հայկական մատենագիտություն» աշխատության մեջ: Տալով «Եղանակ բյուզանդյանի» նկարագիր-բովանդակությունը («Գուշակություն փոփոխությանց օդերևույթ լուսնակաց, քառորդե ի քառորդ, փոփոխությունք եղանակաց, գրից աստեղաց, օդախաղաց, մետեորականաց, երից անցելոց շրջանաց»), նա հրատարակության միանգամայն այլ թիվ է դնում՝ 1800-1820: Նախ նշենք, որ իր վերոհիշյալ աշխատությունը պատրաստելիս Չարբհանայանը ձեռքի տակ ունեցել է 1815 թ. «Եղանակ բյուզանդյանը», որովհետև բերված նկարագիր-բովանդակությունը ունի միայն այդ թվականի տարեգիրքը: Երկրորդ, որ ոչ պակաս կարևոր է, Չարբհանայանը այս նոր թվականն էլ բերում է առանց որևէ ապացույցի:

1803-ը նորից աշխարհ է գալիս 1893 թ. Գրիգորիս Գալեմքյարյանի շնորհիվ: Իր «Պատմություն հայ լրագրության» աշխատության մեջ, անդրադառնալով «Եղանակ բյուզանդյան-

բազմավեպին», գրում է. « «Եղանակ բյուզանդյան» ... 1803-ին սկսավ հրատարակվիլ, ամեն տարվո սկիզբն, աշխատությամբ Հ[այր] Ինճիճյան անխոնջ գրասիրի և տևեց մինչև 1820» (էջ 27): Այնուհետև հաջորդում է համարի մանրամասն նկարագրությունը և «Եղանակ բյուզանդյանի» 1808 թ. համարից մի մեջբերում: 1808 թ. հրատարակված «Եղանակ բյուզանդյանի» մասին, որից մեջբերում է կատարված «Պատմություն հայ լրագրության» ուսումնասիրության մեջ, կխոսվի հետագայում, իսկ գալով համարի նկարագրին, որն անում է Գալեմբյարյանը, ապա պետք է ասել, որ նա ևս ձեռքի տակ ունեցել է 1815 թ. համարը:

«Եղանակ բյուզանդյանի» հրատարակության 1803 թ., այսպիսով, մտնում է մասնագիտական գրականության մեջ: Այդ թվականն է ընդունում նաև Գարեգին Լևոնյանն իր «Հայոց պարբերական մամուլը» (Ալեքսանդրապոլ, 1895, էջ 11-12) և «Լիակատար ցուցակ հայ լրագրության» (Երևան, 1934, էջ 3) աշխատություններում, թեև առաջին դեպքում նա տեսել է 1815-1820 թթ. համարները, իսկ երկրորդ դեպքում՝ պատկերված 1815 թ. մի համար: Եվ արդեն վերջերս, 1960 թ. հրատարակելով իր «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» աշխատության երկրորդ հատորը, հանգամանորեն քննելով «Եղանակ բյուզանդյան» տարեգիրքը (էջ 126-154), ակադ. Ա. Կարինյանը քաղաքացիական իրավունք տվեց 1803 թ., թեև իր բոլոր հղումները, մեջբերումները, վկայակոչումները և այլն (իսկ դրանց թիվը հասնում է մոտ 45-ի) բերվում են «Եղանակ բյուզանդյանի» 1813 և հետագա թվականների համարներից: 1803-1820 թթ., այսպիսով, ընդունվել և արդեն օրինականացել են որպես հիշյալ տարեգրքի հրատարակության տարիները:

Բայց այդպե՞ս է արդյոք:

Ղուկաս Ինճիճյանի գործունեության սկիզբը պայմանականորեն կարելի է բաժանել երկու շրջանների: Եթե առաջին շրջանում՝ 1790-1804 թթ. նա հանդես էր գալիս որպես բեղմնավոր գրող և իրար հետևից հրատարակում կամ հրատարակության էր պատրաստում իր գործերը («Տեսութիւն համառօտ հին և նոր աշխարհագրութեան», 1791, 600 էջ. «Ամարանոց Բիւզանդեան», 1794, 253 էջ. «Աշխարհագրութիւն Օսմանեան պետութեան», II հատոր, 1804, 450 էջ և այլն), ապա երկրորդ շրջանը, երբ նա գտնվում էր Պոլսում, բացարձակ ամլության տարիներ են: Նախ, խիստ խանգարվել էր առողջությունը, որը երկարատև ու հիմնավոր բուժման կարիք ուներ: «Ողջ ենք ամենեքեան, – իր մի նամակում գրում էր Գաբրիել Ավետիքյանը, – բաց ի Հ(այր) Ղուկասէն, որոյ հնացեալ ախտակրութիւն, որ է գելումն ջլաց, հանդերձ նեղութեամբ ստորին մասաց մարմնոյ, որով և խափանեալ կայ ամենայն գործոց: Ապա մի ևս զայրասցի ախտն, **մինչև անպիտան առնել զնա**»<sup>3</sup>: Հիշյալ ժամանակաշրջանում Ինճիճյանը ոչ միայն ոչինչ չի կարողանում գրել, այլ նույնիսկ դուրս է գալիս գրական տեսադաշտից: «1805 թվականի փետրվարեն, ուր Ինճիճյան կմեկնի Պոլիս, մինչև 1810, ինճի անձանոթ է ինչ որ նա կգործե»- գրում է Ներսես Անդրիկյանը<sup>4</sup>:

Ասես այս ամենն ամբողջացնելու համար՝ դարասկզբից սկսած ծայր առան հասարակական-քաղաքական մի շարք դեպքեր, որոնք սաստիկ ծանրացրին Մխիթարյան միաբանության վիճակը: 1796 թ. սկսելով իտալական արշավանքը, «Մեծ զինվորը» (Մխիթարյաններն այդպես էին կոչում Նապոլեոնին) շուտով գրավում է Վենետիկը: Կիրառվող բազմաթիվ սահմանափակումներից մեկն էլ այն եղավ, որ բռնագրավվեց Վենետիկի կենտրոնական բանկում գտնվող Մխիթարյանների 60 հազար ֆրանկ դրամագլուխը, որի հետևանքով անտանելի պայմաններ ստեղծվեցին նրանց համար: Հետագայում, երբ

<sup>3</sup> «Բազմավեպ», 1912, N 2 (Այստեղ և հետագա ընդգծումները մերն են)

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 73:

աստիճանաբար վատացան Նապոլեոնի և կաթոլիկ եկեղեցու պարագլուխ Պիոս VII պապի հարաբերությունները, խստությունները ավելի շատացան: Ի լրումն այս բոլորի, 1810 թ. ապրիլի 25-ին հրապարակվեց Նապոլեոնի հրովարտակը՝ բոլոր տիպի կրոնական-կաթոլիկական հաստատությունները չեղյալ հայտարարելու և միաբաններին ցրելու մասին: Հասկանալի է, որ հրովարտակը վերաբերվում էր նաև Մխիթարյան միաբանությանը: Եվ չնայած վերջիններս կարողացան հասնել այն բանին, որ իբրև բացառություն թույլատրվի իրենց գործունեությունը, այնուամենայնիվ, միաբանության վիճակը առավել քան ծանրացավ: Բավական է ասել, որ XIX դարի ամբողջ առաջին տասնամյակում Մխիթարյանները ընդամենը մի քանի անուն գիրք են հրատարակում (ծաղկուն ժամանակ միաբանությունը հրատարակել է տարեկան 24 անուն գիրք), այն էլ՝ մեծ դժվարությամբ: Հասկանալի է, որ արտաքին ու ներքին այս բոլոր պայմանները շատ փոքր հնարավորություն էին ընձեռում Ինձիճյանին տարեգրի ինքնուրույն հրատարակություն սկսելու համար: Եվ իսկապես, փաստերը գալիս են ամբողջացնելու վերը նշվածը: 1812 թ. «Դիտակ բյուզանդյան» երկշաբաթաթերթը «Բանասիրական» խորագրի ներքո մի հաղորդում է տպագրում «Նորերս լույս տեսած» «Եղանակ բյուզանդյան-բազմավեպի» 1812 թ. տարեգրքի մասին: Նկարագրելով այնտեղ գետեղված նյութերը, դրանց դասավորությունը և այլն, վերջում ավելացվում է մի շատ կարևոր նկատում. «Եղանակին սա թիվը շատ ընդարձակ է ու ճոխ, քան նախորդ երկու հատորները, որք դիպաց բերումով՝ լղըրճկեկ ու պզտի բան մը եղան»<sup>5</sup>:

Այսպես, ուրեմն, մինչև 1812 թ. «Եղանակ բյուզանդյան-բազմավեպի» ընդամենը երկու տարեգիրք է հրատարակվել, այն էլ՝ «լղըրճկեկ ու պզտի բաներ»:

Հարց է ծագում. ո՞ր թվականին են լույս տեսել այդ երկու տարեգրքերը:

1813 թ. «Եղանակ բյուզանդյանում» նկարագրելով օղի կառուցվածքը, Ինձիճյանը գրում է. «Ան օղը, որ սա մեր մթնոլորտին մեջն է, մեկ պարզ տարր չէ... օրինակ **ինչպես որ գրեր ենք 1809 Եղանակին** մեջ» (էջ 103): Այլևայլ առիթներով վկայակոչելով իր տարեգրքի զանազան համարները, իսկ այդպիսի վկայակոչումներ նա անում է հիսունից ավելի անգամ, Ինձիճյանը 1812 թ. առաջ եղած որևէ այլ համար չի հիշատակում, բացի վերևում բերված 1809-ից: Մնում է եզրակացնել, որ մինչև 1812 թ. հրատարակված երկու «լղըրճկեկ» հատորներից մեկը հրատարակվել է 1809 թ.: Ինչ վերաբերում է մյուս հատորին, արդեն ասացինք, որ Գրիգորիս Գալեմքյարյանը, տալով «Եղանակ բյուզանդյանի» նկարագրությունը, մի քաղվածք է բերում այդ տարեգրքի հազվագյուտ՝ 1808 թ. համարից: Եթե այս բոլորին էլ ավելացնենք, որ 1803-1812 թթ. տարեգրքերը, բացի նշված 1808 և 1809 թթ., մեր մամուլի պատմությամբ զբաղվողներից ոչ ոք երբեք չի տեսել, չի նկարագրել և չի վկայակոչել, ապա կարելի կլինի պնդել, որ «Եղանակ բյուզանդյանը» սկսել է հրատարակվել 1808 թ.:

Հրատարակելով 1808-ին մեկ տարեգիրք և 1809-ին երկրորդը, Ինձիճյանը հետագա ամբողջ երեք տարիներին լռում է: «Եղանակ բյուզանդյանը» նորից հանդես է գալիս 1812 թ. սկսած և այս անգամ արդեն կապված «Արշարունյաց ընկերության» հետ:

1812 թ. կեսերին Պոլսում Հակոբ, Մկրտիչ և Հովհաննես Տյուզյանների ֆինանսական օժանդակությամբ հիմնվում է «Արշարունյաց ընկերություն» գրական-հասարակական կազմակերպությունը: Ինձիճյանը, որն այդ ընկերության «ոգին ու շոգին էր», այնքան, որ «ամբողջ ընկերությունը ուրիշ բան չէր, բայց եթե Ինձիճյան», կարողանում է հասնել այն բանին, որ Տյուզյանները ֆինանսապես օժանդակեն նաև «Եղանակ բյուզանդյանին»: Այս է պատճառը, որ հետագայի բոլոր տարեգրքերը թե նյութի ընդգրկման ու մատուցման եղանակի, թե պոլիգրաֆիկ

<sup>5</sup> «Դիտակ Բյուզանդյան», 1812, էջ 27:

հրատարակության տեսակետից անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա են գտնվում, քան նախորդները: 1812 թ. «Եղանակ բյուզանդյանը» մեզ չհաջողվեց գտնել, ինչ վերաբերում է 1813 թ. տարեգրքին, ապա նա դուրս է գալիս նույնիսկ այն համեստ սահմաններից, որ նախանշել էր Ինճիճյանը, այն է՝ «Եղանակը պզտիկ, բայց իբր դասատետր մըն է. մեջը շատ աղեկ օգտակար բաներու համարներ կուտա, որ կարդացողը ամեն մեկ տարին միտք առնելով, առանց հոգնելու քիչ քիչ բան կը սորվի» (էջ 6): Այս ծրագիր-պլանն էլ Ինճիճյանը աշխատել է պահպանել նաև հետագա հատորների համար և դա լավագույն ձևով հաջողվել է նրան: «Եղանակ բյուզանդյանը», այսպիսով, ամիսների ու օրերի հետ կապված օդերնութաբանական-աստղաբաշխական տվյալներ պարունակելուց բացի առօրյա ընթերցանության համար նախատեսված և առօրյա պահանջները բավարարող «դասատետր մըն» էր:

Ոչ պակաս կարևոր մի փաստ է բացահայտվում, երբ քննում ենք «Եղանակ բյուզանդյանի» 1815 թ. համարը:

Ինճիճյանը մեր այն հեղինակներից է, որ գրելիս սովորություն է ունեցել ընթերցողին անընդհատ հղելու դեպի «Եղանակի» այս կամ այն հատորները, տվյալ իրողության վերաբերյալ ավելի հանգամանալից տեղեկություններ ստանալու համար: Վերոհիշյալ 1815 թ. համարում, օրինակ, խոսելով աշխարհագրության մասին, նա գրում է. «Ինչպես որ **անցած տարվան Եղանակին մեջ գրեցինք**, անանկ կարդաս աշխարհագրությունը, որ քեզի գիտելիքներ ժողովես» (էջ 127): Կամ նկարագրելով մոլորակները, նրանց դիրքը, դասավորությունը, շտապում է ավելացնել, որ «Մոլորակներուն անունները ու շարժմունքները գրինք **անցած տարվան Եղանակին մեջ**» (նույն տեղում): Կամ էլ պահանջելով ծնողներից, որ խաղն անգամ օգտագործել երեխաներին գիտելիքներ հաղորդելու համար, Ինճիճյանը գրում է. «**Անցած տարվան Եղանակին մեջ** պատմությունը սորվիլը՝ նստած խաղու վրա բերինք, օրինակ թավլուի» (էջ 177): Կամ, վերջապես, խոսելով Չինաստանի մեծ պարսպի մասին, նկարագրելով նրա շինությունը, չի մոռանում հավելել. «...Որուն վրա տես **անցած տարվան Եղանակին մեջ**, թղթ. 114» (էջ 188) և այլն, և այլն: 1815 թ. «Եղանակ բյուզանդյանում» այս կարգի հղումներ կատարված են 9 անգամ: Սակայն ուշադիր քննությունը բացահայտում է վերին աստիճանի կարևոր մի հանգամանք: «Անցած տարի» ասելով Ինճիճյանը հասկանում է ոչ թե 1814 թ. համարը, ինչ որ պետք է սպասել և ինչ որ բնական է, այլ մի տարի հետ՝ 1813-ը, որովհետև կատարված բոլոր հղումները գտնում են «Եղանակ բյուզանդյանի» 1813 թ. համարում: Ինճիճյանը 1815 թ. տարեգրքում, նկարագրելով տարիքի հետ մարդու բնավորության փոփոխությունները, գրում է. «Ահա քեզի մեկ պատճառ մը, ինչու ըսինք **անցած տարվան Եղանակին մեջ** թղթ. 22 «Եկավ ատեն, որ կենճը ձերացավ... տղան մարդ դարձավ» (էջ 44)»: Ինճիճյանի կատարած մեջբերումը նույնությամբ գտնվում է 1813 թ. «Եղանակ բյուզանդյանում», ուր նշված՝ 22-րդ էջում կարդում ենք. «Եկավ ատեն, որ կենճը ձերացավ, ձերը կենճըցավ, տղան մարդ դարձավ: Աղեկ մտածե աս իրեք խոսքերն ալ...»: Ասվածից պարզ է, որ 1815 թ. «Եղանակ բյուզանդյանում» «անցած տարի» ասելով Ինճիճյանը հասկանում է այդ տարեգրքի 1813 թ. համարը և 1815 թ. համարը դիտում է որպես 1813 թ. «Եղանակ բյուզանդյանի» օրգանական շարունակությունը: Եվ եթե այս բոլորին ավելացնենք նաև, որ հետագա հատորներում կատարված բազմաթիվ հղումներում Ինճիճյանը երբեք չի հիշատակում 1814 թ. համարը, իսկ հղում առ մյուս թվականների հատորները կատարվում է բազմիցս, ապա կարելի կլինի վերջնականապես պնդել, որ «Եղանակ բյուզանդյան-բազմավեպը» 1814 թ. չի հրատարակվել:

Հետագա հրատարակությունների թվականների հարցը արդեն դժվարություն չի ներկայացնում: 1815-ից մինչև 1820 թ. ներառյալ «Եղանակ բյուզանդյանը» հրատարակվել է

անընդմեջ, ավելի կամ պակաս հարստությամբ, տարին մեկ հատոր: Հիմնականում այս համարներում է Ինճիճյանը սկսում հանդես գալ իր այն բազմաթիվ հոդվածներով, պոեզիայի հարցերին նվիրված տրակտատներով, դարաշրջանի հասարակական-քաղաքական երևույթները մեկնաբանող տեսություններով, որոնք նրան ներկայացնում են իբրև ժամանակի լուսամիտ մարդկանցից մեկը:

1819 թ. վերջերից ծայր առած իրադարձությունները նորից փոխում են դեպքերի ընթացքը:

Պետության մեջ առաջին մարդիկ համարվող Տյուզյանները մեղադրվում են դրամաշորթության և պետական միջոցները շոռայելու մեջ: Երեք եղբայրներն էլ հեռացվում են աշխատանքից և դատապարտվում կալանքի՝ ունեցվածքի բռնագրավմամբ: Այս բանը ծանր հարված է հասցնում «Արշարունյաց ընկերությանը», որը շուտով (1820) դադարում է գոյություն ունենալուց: Ինճիճյանը, որը մինչ այդ արդեն հարուցել էր օսմանյան պետության կասկածը, փախչում է Օդեսա (1819թ. վերջերին): «Եղանակ բյուզանդյանի» հրատարակությունը շարունակելու մասին խոսք լինել արդեն չէր կարող:

Ինճիճյանին ձեռնաթափ է արել նաև այն անտարբեր վերաբերմունքը, որ եղել է «Եղանակի» նկատմամբ: Այդ անտարբերությունն էլ հիմք է տվել նրան՝ գիտության կարևորության մասին խոսելիս հետևյալ նյարդային տողերը գրելու. «Ասկից կերևա որ՝ որչափ հարկավոր բան են ասոնք մարդուս, բայց աս հարկավորությունը դուն ինչվան հիմա չիմացար, որովհետև Եղանակները աս մտքով հանեցինք, մեջը ամենեն մեյ մեկ ծաղիկ, մեյ մեկ գիտելիք ժողված դրինք, որպես զի դուն ամմեն տարի քիչ հանգիստ սորվիս, զավկիդ ալ ցըցընես սորվելու, բայց դուն անոնք բանի տեղ չի սեպեցիր»<sup>6</sup>:

Այսպիսով, կարելի է ասել, որ «Եղանակ բյուզանդյան-բազմավեպը» հրատարակվել է որպես տարեգիրք 1808, 1809, 1812, 1813, 1815-1820 թթ.:

Պատմա-բանասիրական հանդես

1966, N 2

<sup>6</sup> Ղ. Ինճիճյան, Դարապատում, հատ. 7, Վենետիկ, 1827, էջ 42: